խաչս Վանեցի աշճի մահտեսի Օհանէսին և իւր ծնողացն հոգ-ւոյն ՌՄԽԹ (=1800) թուին»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ (մհս.) ՍԷԼԱՄՍԸՋ ՕՂԼ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, ՋԱՆԱՔԳԱԼԷՅԻ.— 1850ին Զանաքգալէի Քիւչիւք Համամ Փողոցին մէջ իր սեպհական տունը կը կտակէ Ս. Յակոբի վանքին, պայմանաւ որ իր կնոջը և երկու աղջիկներուն մահէն յետոյ գործադրուի սոյն կտակը (Կտակաց Տումար, էջ 18)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ.— ՈԿԴ (= 1215)ին ձեռագիր մը կը նը-ուիրէ Ս. Յակոբի վանքին հետևեալ յիշատակարանով. «Ես Յովհաննէս վրդս. մեղուցեալ հոգս. որ տվի զգանձս ածային. զեսայիս, և զառաքեալս, ի քաղաքս եմս. ի վանքս Հրեշտա-կապետացս, Միքայէլի և Գաբրիէլի, յիշատակ ինձ և ծնողացն իմոց։ Արդ աղաչեմ զամենեսեան։ Որք հանդիպիք սմա ընթերցմամբ կամ գաղափարելով, մեղաց թողութիւն խնդրեցէք Յովհաննէս վրդ.ի. և հաւրն իւրոյ Կարապետի և մաւրն իւրոյ...»։ (Խաչ. Ցուց. տետր ԺԳ. էջ 1017, ՄՁ. Թ. 417)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ.— 1635ին կը յիշատակէ ձեռագիր հաւաքածոյ մը (ՄՁ. Թ. 171) որուն մէջ կը գրէ հետևեալը. «Յիշատակ է եօթն իմաստասիրաց գիրքս Յովանէս վարդապետին և իւր ծնողացն, հօրն Մկրտչին և մօրն Թարվիզին և եղբարցն Գրիգորին, Զաքարին, Մարգարին, հաւրեղբարցն և քուերաց Հազրավարդին, և Կոհարին...։ Դարձեալ գնեցաւ գիրքս ի ձեռանէ Խարբերդացի Յոհաննէս աբեղային, ճերմակ ծովուն ատակն ի քաղաքն, որ կոչի Պանտուրմայ, թվ. ՌՁԴ (=1635)...։ Յիշատակ եդաւ գիրքս Սրբոյն Յակոբայ ձեռամբ Յովհաննէս առաջնորդին և ինքն հանդեաւ ի Քս. ՌՃԻԶ (= 1677)։ (Խաչ. Ցուց. ԺԵ. էջ 1178)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ.— 1742ին Ս. Ծննդեան վանքին կը յիշատակէ Շարակնոց մը (ՄՁ. Թ. 1550) հետևեալ յիշատակարանով, «... ողորմեա հիւսկ և յետնեալ ծառայիս քում մեղսամած Յովհաննէս անարժան բանիդ պաշտօնէի որ եատուր շաբաթանս զայս յիշատակ ի դուռն Սուրբ Ծննդեան Քի. Ա.յ. մերում և ի վանս մերում հայոց առ ի վայելումն սրբակրօն միաբանից հոգևոր հարց և եղբարց մերոց...։ Յորժամ ամէն ծը-